ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Հ Ր Ա Մ Ա Ն

11 մարտի 2014 թվականի N 34- Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 14-Ի N 20-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեում Ասիական զարգացման բանկի առաքելության ներկայացուցիչների հետ քննարկման արդյունքներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահի 2014 թվականի փետրվարի 14-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ասիական զարգացման բանկի միջև առաջարկված ենթակառուցվածքների կայունության աջակցության ծրագրի փոխըմբռնման հուշագրով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի հանրային տեղեկատվական պլանը հաստատելու մասին» N 20-Ա հրամանում կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

1) հրամանի վերնագրից հանել «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ասիական զարգացման բանկի միջև առաջարկված ենթակառուցվածքների կայունության աջակցության ծրագրի փոխըմբռնման հուշագրով» բառերը.

2) հրամանի 3-րդ կետի բ) ենթակետում «տեղեկատվություն» բառից հետո լրացնել «յուրաքանչյուր ամսվա առաջին շաբաթվա ընթացքում (իսկ հրատապ լինելու դեպքում՝ սեղմ ժամկետում)» բառերը.

3) հրամանի 1-ին կետով հաստատված Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի Հանրային տեղեկատվական պլանի՝

ա. 3-րդ կետում «կընձեռի՝» բառից հետո լրացնել նոր ենթակետեր հետևյալ խմբագրությամբ. «

- տեղեկացնել ջրային ոլորտի շահառուներին և շահագրգիռ կողմերին.

• տարբեր շահառուներին ավելի լավ մասնակցություն ցուցաբերել այն որոշումներին, որոնք կարող են ազդեցություն ունենալ իրենց գործունեության վրա.», իսկ «սատարում» բառից հետո «տարբեր շահառուներին ավելի լավ մասնակցություն ցուցաբերել այն որոշումներին, որոնք կարող են ազդեցություն ունենալ իրենց գործունեության վրա» բառերը հանել.

բ. 4-րդ կետի 2-րդ ենթակետում «կազմակերպությունները» բառից հետո լրացնել «այլ պետական կառավարման մարմիններ» բառերը.

գ. 7-րդ կետում աղյուսակ 1-ը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

Աղյուսակ 1

Առաջարկի և պահանջարկի խմբերի համար հաղորդակցության գործիքները

Առաջարկի խումբ	Պարբերականությունը	Պահանջարկի խումբ	Պարբերականությունը
Ներկայացումներ, ՋՏՊԿ տարեկան հաշվետվություններ	Առկայության դեպքում՝ երկու շաբաթվա ընթացքում	Գովազդային տեսանյութեր/ֆիլմեր/հասարակական գովազդի տեսանյութեր	Եռամսյակը մեկ անգամ
Դեմ առ դեմ քննարկումներ	Ըստ անհրաժեշտության՝ կապված կարևոր իրադարձությունների հետ	Փաստավավերագրական տեսանյութեր	Յուրաքանչյուր ներդրումային ծրագրի համար
Թեմատիկ թերթերում/ամսագրերում հոդվածներ	Առկայության դեպքում՝ երկու շաբաթվա ընթացքում		
Գործավարության կարգ	Փոփոխությունն ուժի մեջ մտնելուց՝ մեկ ամսվա ընթացքում	Մամլո հաղորդագրություններ և այլ հաղորդագրություններ	Առկայության օրը
		Հասարակությունից արձագանքներ հարցումների տեսքով	Առկայության դեպքում
Տարբեր գովազդային նյութեր (ցուցանակներ, գրքույկներ, բրոշյուրներ, օրացույցներ և այլն) Ինտերնետային կայք՝ ինտերակտիվ հնարավորությամբ	Օրացույցներ՝ տարեկան մեկ անգամ, ցուցանակներ, գրքույկներ, բրոշյուրներ՝ յուրաքանչյուր ներդրումային ծրագրի իրականացումից հետո Ինտերնետային կայք՝ մշտական	Տարբեր գովազդային նյութեր (ցուցանակներ, գրքույկներ, բրոշուրներ, օրացույցներ և այլն) Ինտերնետային կայք՝ ինտերակտիվ հնարավորությամբ	Օրացույցներ՝ տարեկան մեկ անգամ, ցուցանակներ, գրքույկներ, բրոշյուրներ՝ յուրաքանչյուր ներդրումային ծրագրի իրականացումից հետո Ինտերնետային կայք՝ մշտական
Աջակցություն՝ օգնել զարգացնելու մասնավոր օպերատորների/կառավարիչների հնարավորությունները	Մշտական	Հասարակության հետ կապերի կայացմանը և հաղորդակցմանն ուղղված գործողություններ՝ հայտնի գործիչների միջոցով: Օրինակ՝ կազմակերպել (կամ մասնակցել) Ջրի օր և հրավիրել (ընդունել հրավերք) հայտնի մարդկանց, ՋԼՄ-ներին և թերթերին:	Տարեկան մեկ անգամ

ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**